

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ ԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ

ՎԵՏ. Հայրապետի մահուան առիթով:

Ամենապատիւ Տ. Գեորգ Ս. Արքեպիսկ. Սուրբնեան
Կաթողիկոսական Տեղապահ Ի Ս. Էջմիածին

Ամեն. Ս. Հայր,

Պոլսէն Ամեն. Տ. Եղիշէ Ս. Պատրիարք Հօր ամուսնոյ
13 թուակիր մէկ հեռագիրը կը գուժէր մեզ Ազգիս ՎեՏ.
Հայրապետ Տ. Տ. Մատթէոս Ս. Կաթողիկոս Իզմիրլեանի
անակնկալ և տխուր մահը, որով համօրէն ժողովուրդն
Հայոց կը զրկուէր իր սիրեցեալ Հայրապետէն:

Ի լուր այս գուժին անբացատրելի յուզումի մատ-
նուած փութացիւնք անմիջապէս ինչպէս յԱզգ. պատրի-
արքարան, նոյնպէս և Ձեր Բարձր Սրբազնութեան ցա-
ւակցական հեռագրեր ուղղել, զոր կը յուսանք թէ ստա-
ցած կը լինիք: Ապա անմիջապէս քաղաքիս Սանասարեան
և աղգ. վարժարանները ի նշան սգոյ փակել տուինք երեք
օրուան համար և վիճակիս բոլոր գիւղերն ևս յարակից
վիճակները յատուկ շրջաբերականաւ յանձնարարեցինք, որ
դեկ. 19, կիրակի առաւօտուն բոլոր եկեղեցիներուն մէջ
յատկապէս Ս. Պատարագ մատուցանելով, հօգեհանգս-
տեան պաշտօն կատարեն ի հանգիստ հօգուոյ հանգուցեալ
երջանկայիշատակ Հայրապետին:

Տխուր լուրը նոյն օրն իսկ տարածուած ըլլալով քա-
ղաքիս մէջ, Ազգ. ժողովոց և խորհրդոց անդամներ, ինչ-
պէս և Ազգ. երևելիներ փութացին ցաւակցական այցե-
լուծիւն տալ Ազգ. Առաջնորդարանս: Ազգային շրջանա-
կէն դուրս մեզ ցաւակցական այցելութիւն տուին նաև

1 Կարնոյ Վսեմ. կուսակալ ձէլալ պէյ.



1287-54

- 2 Կարնոյ Իթիհատի մասնաճիւղէն մի պատգամաւորութիւն,
- 3 » Հայ-Հռովմէականաց Առաջն. Գերապայծառ Կարապետ եպիսկ. Քչուրեան.
- 4 » Ռուս. ընդհ. Հիւպատոս Մ. Շիրեթէր և իր քարտուղարը.
- 5 » Անգլ. Հիւպատոսին կողմանէ՝ որ հիւանդէր, անոր գործակատարը.
- 6 » Պրանս. Փոխ-Հիւպատոս Տիգրան էֆ. Սրապեան.
- 7 » Ամերիկեան միսիօնար Մ. Սթէյբըլթըն.
- 8 » Բողոքականաց քարոզիչ պատուելի Սինանեան.
- 9 » Յիսուսեան միաբանութենէն Հայր Անթուան և Հայր Կիւրեղ վարդապ.
- 10 » Յունաց Մետրոպօլիտի փոխանորդը.

Այս ցաւակցական այցելութիւններէն դատ Ամերիկեան միսիօնարական վարժարանը՝ բողոքական հասարակութեան վարժարանը և Յիսուսեան միաբանութեան վարժարանը ի պատիւ հանգուցեալ Հայրապետին և ի նշան սգոյ փակուած էին անմիջապէս: Քաղաքիս Մայր եկեղեցւոյ մէջ դուժաբեր հեռագրին ժամանած օրէն մինչև դեկտ. 19-ի կիրակէ երեկոյին ամէն երեկոյ ամբիծ ք ըսուեցաւ. իսկ կիրակէ առաւօտուն ըստ կանխորոշ կարգադրութեան առաջնորդական պատարագի մատուցմամբ հոգեհանգստեան հանգիսաւոր պաշտօն կատարուեցաւ ի ներկայութեան երկսեռ խումն բազմութեան: Հայ ժողովուրդն իր սիրեցեալ Հայրապետին դառն կորուստը ողբալու և իր ամբիծ հոգւոյն ի հանգիստ աղօթելու համար փութացած էր միահամուռ և թախծալից սրտիւ: Մէկ ժամ տեղ դամբանական քարոզով մը բացատրեցինք Վեհ. Հայրապետին մահուամբ առաջ եկած ազգային մեծ սուգը: Հոգեհանգստեան սոյն պաշտօնին Վսեմ. Կուսակալն ու Միութեան և Յառաջդիմութեան Գոմիթէին մասնաճիւղը ներկայացուցիչներ ղրկած էին. իսկ անձամբ եկած

էին Ֆրանս, փոխ-Հիւպատոս Տիգրան էֆ. Սրապեան և Յիսուսեան Միաբանութենէն Հայր Անթուան և Հայր Կիւրեղ: Սանասարեան և Ազգ. վարժարանաց աշակերտք իրենց ուսուցիչներուն հետ ներկայ էին պաշտամանց: Յաւարտ եկեղեցական արարողութեանց թէ օտարազգիներու և թէ Ազգ. երեւելեաց ցաւակցական այցելութիւններն ընդունեցինք: Ի միջի այլոց այցելեցին նաև Օսմ. Պանքայի Տնօրէն պ. Զարիֆեան և Բէթիի Տնօրէն պ. Պարթօլէմի. իսկ ամսոյս 20-ի բշ. օրն Ազգ. շրջանակէ դուրս եղած վերոյիշեալ բոլոր այցելող պաշտօնէութեանց անձամբ փոխադարձ այցելութիւն տալով, յանուն Ազգին շնորհակալութիւն յայտնեցինք իրենց ցաւակցական անկեղծ արտայայտութեանց համար:

Այս ամենը տեղեկագրելով անդամ մ'ալ կը կրկնենք մեր խորին վիշտն ու կսկիծը երջանկայիշատակ Հայրապետին դառն մահուան առթիւ և կաղօթենք, որ Տէր Յիսուսը հանդուցեալ Հայրապետին հոգւոյն հանգիստ և պատ. Միաբանութեանդ, Հայ. եկեղեցւոյ սգաւոր պաշտօնէութեան և համօրէն Ազգիս երկնային մխիթարութիւն պարգևէ և ի պատշաճ ժամանակի շնորհէ արժանաւոր յաջորդ մը Հայրապետական այրիացեալ Աթոռին՝ ի մխիթարութիւն և ի պարծանս բազմավիշտ Հայ ժողովրդեան:

Ամենախոնարհ յարգանօք կը մնանք Ձերդ Ամեն. Սրբազնութեան

Խոնարհ վշտակէց և աղօթակէց Առաջնորդ Հայոց Կարնոյ Սմբատ եպիսկ. Սաղէթեան.

«Սուրհանդակ»ի թղթակիցը (4 Յունվր.) գրում է Կ. Պօլսից.

Տխուր զանգահարութիւնը առաւօտից ժողովեց մայր եկեղեցին իր որբացեալ զաւակներին, որոնք լցւել էին թէ փողոցները, թէ գաւիթը և թէ եկեղեցին:

Ժողովրդի խուռն բազմութիւնը եկել էր իր արտա-

սուքները թափելու իր մէջ սնուած, իր մէջ մեծացած և կեանքի մեծագոյն մասն իր հետ անցկացրած մեծ հայրենասէրի, մեծ մարդու, Մատթէոս Բ. Իզմիրլեան Հայրիկի մահուան համար։

Այն ժողովուրդը, որը նոյն եկեղեցու բեմից շատ անգամ լսել էր հանգուցեալի՝ սիրող և բարեսիրտ հօր կենդանի խօսքերը, այս անգամ եկել էր ոչ թէ նրան տեսնելու ու լսելու, այլ իրենից շատ հեռու, ծովի այն կողմը, հայութեան սիրտ ս. Էջմիածնում այդ օրը հողին յանձնուող իր սիրող հօր համար ազօթելու։

Այն, ազօթում էին բոլորը, լռիկ, սրտաբեկ ու մեծ կսկիծով։

Մինչ ս. պատարագի սկիզբը, եկեղեցում արդէն ասեղ ձգելու տեղ չկար, սակայն ժողովուրդը, թէ ներսը և թէ դուրսը իրեն պահում էր շատ օրինակելի կարգապահութեան մէջ։

Եկեղեցու ձախ դասը և ձախակողմեան կէսը յատկացուած էր օտար քարձրաստիճան ու պատուաւոր հիւրերին, իսկ աջակողմեան դասը հայ հոգևորականներին և աջակողմեան կէսը պետական ներկայացուցիչներին, ազգ. երեսփոխաններին ու հայ ներկայացուցիչներին, մինչդեռ եկեղեցու ճիշտ կէսը, դէպի գաւիթը, յատկացուած էր ժողովրդին։

Եկեղեցու ճիշտ մէջ տեղը դուրս չէր մի գրասեղան օտար մամուլի ներկայացուցիչներին համար։

Ոտիկանութիւնը միմիայն կարգ էր պահպանում, իսկ հայ ղինւորներէց կազմուած էր մի շղթայ վիտտող հասարակութեան հոսանքի դէմ։

Օտար հիւրերից ներկայ էին միտրոպոլիտ Տ. Կիրելոս, յունաց պատրիարքի անձնական ներկայացուցիչը, և յունաց պատրիարքական փոխանորդ Տ. Վինեամին, յունաց քաղաքական ժողովի անդամներէց՝ պ. Մ. Կազանովա և Զոտոս, «Պրօօդոսի» խմբագիր Սպանուդի և գործակատար Իկիատիս, Բողոքականների կողմից Ազգապետ պ. Յակոբ Պոյաջեան, Բուլղարաց Էկզարխի կողմից՝ սինո-

դական Տ. Բոմանոս միտրոպոլիտը և եկեղեցական դպրոցի տնօրէնը:

Ներկայ էին նաև Ասորիների պատրիարքի կողմից Տ. Պուլոս, Հրէից խախամապետ Նաուժ էֆ. և գործակատարը:

Դեսպանական մարմնի կողմից ներկայ էին՝ ռուսական դեսպանատան ա. քարտուղար պ. Բոտկին, բ. քարտուղար Մ. Ստրոտման և կըցորդ Միլլեր. ֆրանսիական դեսպանատան կողմից Մ. Բոպ և հիւպատոսի կողմից պ. Նշան Գալպճեան, անգլիական դեսպանատնից ա. թարգման Մր. Ֆից Մորիս և մի քարտուղար, ամերիկական դեսպանատնից հիւպատոսը և ա. թարգման Արչակ էֆ. Շմաւոնեան, պարսկական դեսպանատնից ա. թարգման Յովհաննէս խան, հոլլանդական դեսպանատնից ա. թարգման Կարապետեան էֆ. Յունաց դեսպանատնից գործակատար Մ. Ալէքսանդրոպուլոս, ռուսական դեսպանի կողմից Մ. Ալֆոնս Միխալ:

Բանկերից և օտար ընկերութիւններից ներկայ էին՝ Օսման. բանկի կողմից Մր. Պետ. Կրեդիլիոնէի կողմից պաշտօնեաներ, Ռորէլտ կոլէջի տնօրէն Մր. Գէյց իր տիկնոջ հետ և ուրիշները:

Պետական պաշտօնեաներից՝ ներկայ էին՝ արտ. գործ. մինիստր Թալէադ բէյ, առևտրի և հանրօգուտ շինութեանց մինիստր Պետրոս էֆ. Հալաճեան, Վարչապետի կողմից՝ արարողապետ Պէհճէթ բէյ, ծով. մինիստր նախ. և ծերակոյտական Սալիհ փաշա, կրօնների տեսուչ Պեհա բէյ, զինւորական մինիստրի կողմից հրամանատար Շէհապետտին բէյ, ծովային մինիստրի ա. թիկնապահ Ճեմիլ բէյ, երկրագ. մինիստրի կողմից Հիքմէթ բէյ, ելլեմտից մինիստրութիւնից Գարագաշեան և Պէրպէրեան էֆ., Գաբրիէլ էֆ. Նորատունկեան տիկնոջ հետ, Մանուկ էֆ. Աղարեան, օսմ. պարլամենտի նախագահի կողմից՝ Պասրի բէյ, երեսփոխանների կողմից՝ Կոսմիդի էֆ., Պուշօ, Վամվագոս, դօկտ. Տաղաւարեան, Վարդգէս, Մուրադ, Գեղամ և Պօշկէշեան էֆէնդիները:

Շէյխ-իւլ-իսլամի կողմից մի բարձրաստիճան իւլէմա, Պոլսոյ կուսակալութիւնից՝ Ահմէդ Ասըմ բէյ:

Պետական խորհրդից Զարեհ Տիլպէու, Տիրան Աշնան, Ա. Հիւրմուզ, դատական ընդ. քննիչ Յակոբ Ստամբուլեան: Ազգանէր հայուհեաց կողմից տ. Արշակունհի Թէօդիկ և տ. Զարունհի Բալիմեարին:

Ներկայ էին բոլոր ազգ. երեսփոխանները և շատ ուրիշ խմբակցութիւններից և հաստատութիւններից ներկայացուցիչներ:

Սեղանի ձախ կողմը մի աթոռի վրայ դրւած էր թագ, (եպիսկոպոսական), եմիփորոն, շուրջառ, հայրապետական կոնքեռ և դաւազան սև քօղով ծածկւած:

Ժամերգութեան միջոցին լսոււմ էր տխուր զանգահարութիւնը, եպիսկոպոսներից Տ. Տ. Գրիգորիս Յովհաննիսեան, Հմայեակ Դիմաքսեան, Գաբրիէլ ԶէվահիրՉեան, Մաղաքիա Տէրունեան, Գէորգ Երիցեան սրբազանները և վարդապետներ շուրջառւած շրջապատեցին ս. Դուրեանին, որը կանգնած էր սև փիլոնով:

Սկսուեցաւ հոգեհանգիստը, որից յետոյ Դուրեան սրբազանը դառնալով ժողովրդին իր յուզւած ձայնով արտասանեց մի գեղեցիկ դամբանական:

Սրբազանը դամբանականի մէջ յիշեց հանգուցեալ Հայրապետի բոլոր գործերը իրեն յատուկ ոճով և խոր տպաւորութիւն թողեց հանդիսականների վրայ և վերջացնելով խօսքը, ասաց. «Այս տխուր առիթով դառնանք Աստծուն և խնդրենք Իրմէ՛ Քաղաւոր երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա և զերկրապագուս անւանդ քում պահեա ի խաղաղութեան»:

Ս. Դուրեանը իջաւ սեղանից և նստեց աջակողմեան դասում մի աթոռի վրայ: Պատրիարքական աթոռին չընստեց:

Ժամերգութիւնից յետոյ բոլոր ներկայ եղողները առաջ անցան և սրբազ. պատրիարքին յայտնեցին իրենց ցաւակցութիւնները. ամենից առաջ եկաւ յունաց պատգամաւորութիւնը, և փոխանորդը կարգաց յունաց պատ-

րիարք Տ. Եօակիմի նամակը, որով ցաւ էր յայտնում անձամբ ներկայ չգտնւելու համար և մխիթարութիւն էր մաղթում հայ եկեղեցուն ու ազգին, որի համար շնորհակալութիւն յայտնեց Դուրեան սրբազանը:

Ս. Դուրեանը շարաթ օրից եկել էր Երուսաղէմատուն, գիշերը այնտեղ մնացել, իսկ հոգեհանգստից յետոյ գնաց դարձեալ Երուսաղէմատուն և ճաշից յետոյ վերադարձաւ իր բնակարանը՝ Գատը քէօյ:

Կէս օրից յետոյ պատրիարքի փոխանորդը եւրոպական Նոր-տարու պատճառով գնաց շնորհաւորելու դեսպաններին, այդ իսկ պատճառով օտար հիւրերից շատերը ներկայ չկարողացան գտնւել, որովհետև իրենք էլ հիւրեր էին ընդունում:

Համայն հայ ազգի այս տխուր սգահանդէսին բացակայ էին հայ-հռովմէականների կողմից և պատրիարքարանի կողմից ներկայացուցիչներ:

Թէրզեան պատրիարքը հայ կաթողիկաց ազգ. ժողովում ասել է, որ «կաթողիկ եկեղեցին չարտօնէր հայ հերետիկոս եկեղեցին պատարագին ներկայացուցիչ զրկել ...»:

Ս. Էջմիածնի Սինօդի ամենապատիւ արքեպիսկոպոսներին եւ միւս անդամներին.

ԱԿԱՆԱԻՈՐ ԵՒ ԱՄԵՆԱՊԱՏՆԻ ՀԱ՛ՐՔ,

Ձեռք կարող ականատես լինել հայ ազգի վերայ ծանրացած մեծ վիշտին ու սուգին առանց մատուցանելու Ձեզ մեր յարգանքից բղիսած վշտակցութիւնը, որ հաւասարապէս զգում և արտայայտում են հայ ազգի անգլիական բոլոր բարեկամները:

Մեր առաջ բացուած գերեզմանը չափազանց թարմ է, որպէս զի կարողանանք ըմբռնել մեծութիւնն ու արժէքը այն կորստի, որ կրօնն ու մարդկութիւնը հաւասարապէս տուժում են հայ եկեղեցու ծայրագոյն պատրիարքի և յարգանաց արժանի քահանայապետի յաւիտենականութեան գիրկն անցնելու իրողութիւնը:

Մենք խորապէս համոզուած ենք, որ ապագայի պատմութիւնը պէտք է ամենից աւելի արժանաւոր տեղ մատուցանի հողածին սրահում՝ Նորին Սրբութիւն Մատթէոս Բ.—ին, ոչ միայն իւր գլխաւատութեան և իւր կեանքի ազնուութեան համար, իւր վեհութեան յանգող քաջութեան և հալածանքի օրերին իւր քնքոյշ հոգածութիւնը մի մարտիրոս ազգի այրիների ու որբերի նկատմամբ երևան հանած հաստատամտութեան, հայ եկեղեցու իրաւունքներն ու արտօնութիւնները պաշտպանող խանդավառ անվեհերութեան համար, այլ և այն պատճառով, որ նրա կեանքն ամեն մի յարաբերութեան քրիստոնէական մեծ աւելիքայ էր և օրինակ. մի անվեհեր դրօշակակիր՝ արժանի ամեն տեղ և ամեն ժամանակ բարձրագլուխ կրելու խաչի դրօշը, մի զինուոր, որ արութեամբ մարտ մղեց շարի ուժերի դէմ՝ այնպիսի ջերմեռանդ հաւատով, որ քաղաքակիրթ աշխարհի հիացած հայեացքն էր իւր վերայ գրաւումս։

Անգլիոյ հայկական միութեան անունից և կողմից.

Նախագահ՝ Ֆ. Ջ. Սփենքերն.

Պատուաւոր քարտուղար Էզվերդ Ասկին.

Լոնդոն, 31 դեկտմ. ն. տ. 1910.

Ս. Էջմիածնի Սրբազան Սինոդի Գործօն Նախագահին

ԳԵՐԱՅԱՐԳ ՏԷՐ,

Մենք՝ Հայաստանի Բարեկամների գործադիր Յանձնաժողովը մերձենում ենք խորին վշտակցութեամբ Սրբազան Սինոդիդ նորա և Հայ Ազգի կրած կորստի համար՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Ս. Էջմիածնի Մայրաքոյն Պատրիարքի մահուան առթիւ։

Մեզ շատ լաւ յայանի է նորա իսկական օէրն ու խնամարկութիւնը դէպի իւր ժողովուրդը, որի համար և աքսոր իսկ կրեց. նախկին-Սուլթան Աբտուլ Համիտի առաջ իւր քրիստոնէայ հպատակների նկատմամբ ունեցած դաւաճանութիւնն ու անգթութիւնները արիաբար ի ցոյց

բերելու պատճառով: Մենք կատարելապէս գիտակից ենք, թէ որչափ ծանր պիտի լինի իւր եկեղեցու և իւր ժողովրդի համար մի այդպիսի Գլխի կորուստը: Այժմ՝ իւր անգուշ հոգսերի մէջ անցրած և տանջուած կեանքից յետոյ հանգիստ է վայելում Նա. և հաւատում ենք, որ Նրա յիշատակը մի խթան է և օրինակ կլինի այն բոլոր անձնաւորութիւնների համար, որոնք ճնշուած հայերի պաշտպանութեան գործն են ընդգրկել:

Մենք հաւատում ենք յուսալ, որ Նորա յաջորդը կատարելապէս ու ամբողջովին այնպէս կլինի, ինչ որ Նա էր և որ աստուածային օրհնութիւնը կիջնի Նորա և Հայ Ազգի վրայ և այժմեան վշտի ու խաւարի օրերից յետոյ կառաջնորդէ նոցա դէպի երջանկութիւն ու լոյս:

Ընդունեցէք մեր կատարեալ հաւատալիքը,
Դերայարգ Տէր.

Նախագահ՝ Լէյսի Կ. Ֆ. Կամբընսիօ

Փոխ-Նախագահ՝ Յրէյզեր

» » Հեկտոր Մանրօ Յընօիսըն

Գանձապահ՝ Է. Քայս Բրուկս

Պատուոյ քարտուղար՝ Մէրի Հիկսըն

» » Մէրի Բրուկսըն

» » Զօգէճին Մարօրլ.

Յունուար 11. 1911

47 Victoria Street

Westminster S. W. [London]

Յաւակցութեան հեռագիր է ուղղել վենետիկ Միւլթարեան արքայ իգնատիոս արքեպիսկոպոս Կիւրեղեան:

Մամուլը Հանգ. Մասքէոս Բ. Կաթուղիկոսի մասին.

Հանգուցեալ Պատրիարք—Կաթուղիկոս Մատթէոս Բ-ին, գրում է ԿԱՅԿԱՅ-ը № 295, անգլիական «Daily News» նուերում է համակրական յօդուած և մէջ է բերում իւր թղթակցի խօսակցութիւնը Նրա հետ:

ես առիթ ունեցայ ներկայանալ հանդուցեալին, ասում է թղթակիցը, երբ նա հասաւ Պետերբուրգ Նիկոլայ II Թագաւոր Կայսրին ներկայանալու համար:

«Դուք աշխարհիս մէջ ամենամեծ ազատամիտ լրագրի ներկայացուցիչն էք, ասաց նա ինձ: Ձեր լրագիրը միշտ պաշտպան է եղել հարստահարուածներին և մենք երբէք չենք մոռանայ նրա ջանքերը հայ ժողովրդի համար»:

Այնուհետև Կաթուղիկոսը թեթևակի յիշեց, ինչ որ ինքը կրել էր իւր ժողովրդի իրաւունքի համար մաքաւման հետևանքով: «Ես 12 տարի տարագիր կամ լաւ ևս աքսորական էի Երուսաղէմի վանքերից մէկում»:

Բոլորովին հաւատացած եմ, շարունակեց նա, որ այժմեան սուլթանը և Թուրքաց կառավարութիւնը անկեղծօրէն ցանկանում են տալ հայերին այն իսկ ազատութիւնը, որով օգտուում են թուրքերը. բայց ես կասկածում եմ, թէ Բարձրագոյն Դուռը կունենայ առ այդ բաւական ոյժ»:

Կաթուղիկոսն աչքի էր ընկնում ազատամիտ հայեացքներով. «Հայ եկեղեցին, ասաց նա, կաթուղիկ և օրթոդոքս եկեղեցիներին հակառակ, չի յաւակնում միայն իրան կոչել ճշմարիտ եկեղեցի, այլ բարեացակամութեամբ է վերաբերում միւս դաւանութիւններին: Հայոց եկեղեցուն առաւել մօտիկ են զպտական եկեղեցին Եգիպտոսում, հաբէշականն ու ասորականը: Ես յարգում եմ բողոքական մի քանի հատուածները և մերձաւոր յարաբերութեան մէջ էի Երուսաղէմի անգլիական Բլիտ եպիսկոպոսի հետ»:

Մատթէոս Բ-ը ժամերգութեան արտաքին փայլի վերայ ուշադրութիւն չէր դարձնում: Նա իւր անձը դրել էր հայերի համար, և այդ ժողովրդի բարեկամներն Անգլիայում, անկասկած, անկեղծօրէն վշտակցում են հայերին նրանց կրած ծանր կորուստների համար:

С. Петербургскія Вѣдомости № 281 լրագրում հանդուցեալ Հայրապետի համար կարդում ենք պ. Մ. Ալավերդեանի հետևեալ յօդուածը:

«Դադարեց բաբախելուց այն ազնիւ սիրտը, որը հայերի մէջ 40 տարի շարունակ սիրոյ, օրինականութեան և կանոնապահութեան քարոզի աղբիւրն էր՝ սկսած Եգիպտոսից, Բոսֆորի ափերից, Նեվա դետից և վերջացնելով Էջմիածնով:

66 տարեկան հասակում վախճանուեց նա սրտի կաթուածից, նա—նորին Սրբութիւն ամենայն Հայոց պատրիարք

կաթուղիկոս Մատթէոս Բ. Իզմիրլեանը, և նորից Էջմիածինը ծածկուեց ու ամպերով:

Ի դէմս նորին Վեհապառութեան հայ ժողովուրդը կորցրեց ամբողջ քաղաքակիրթ աշխարհի առաջ իւր ամենաազնիւ խնամատարին ու միջնորդին, իսկ հայ հոգևորականութիւնը և ինտելլիգենցիան յանձին նորա կորցրին անշահապէս վաստակաւորին, տաղանգաւոր բարոզչին ու աստուածաբանին և անկողմնապահ կառավարչին:

Դեռ ոչ շատ առաջ (1908 թ. նոյեմբերի 2-ին) Էջմիածնի կաթուղիկոսական ակադեմիա թեկնածու ընտրուելու առիթով, մենք Շ. Петербургскія Вѣдомостя լրագրի ընթերցողներին ծանօթացրել ենք բոլոր հայերից յարգուած և սիրուած հովուի հետ, և ցանկութիւն էինք յայտնել, որ համազգային ընտրութեան այս գործողութիւնը արժանանար Թագաւոր Կայսրի հաստատութեանը, և նրա հաւատարիմ հպատակ հայ ժողովուրդը Ս. Գրիգոր Լուսաւորչի գահի վերայ տեսնէր արժանաւոր հովուապետին, յանձին այժմ հանգուցեալ Իզմիրլեան Մատթէոս արքեպիսկոպոսի:

Թագաւոր Կայսրը վաւերացրեց հայ ժողովրդի ընտրութիւնը 1909 թուի ապրիլ ամսին, նոյն տարուայ յունիսին նորին Սրբութիւնը Թուրքիայից հասաւ Պետերբուրգ, ներկայացաւ Թագաւորին և շնորհակալութիւն յայտնեց ամենայն Հայոց կաթուղիկոս հաստատելու համար: Այնուհետև տեղի ունեցան հանդիսաւոր ընդունելութիւններ և ընդառաջումներ Ռուսաստանի այն հայերի կողմից՝ որոնք Էջմիածին գնալու ճանապարհի վերայ եղած քաղաքներումն էին ապրում:

Ռուսաստանում երկար ճանապարհորդութեան ժամանակ հանդիպած տեղերում, իւր հօտին խրատելուց և մխիթարելուց յետոյ նորին Սրբութիւնը Էջմիածին հասաւ յունիսի վերջերին:

Մինչև սեպտեմբեր ամիսը, մինչ օժուած չէր, Նա չստանձնեց իւր ծանր և դժուարին պաշտօնը: Անցեալ 1909 թ. սեպտեմբերին Նա բազմեց կաթուղիկոսական գահը և իւր հմուտ ու իմաստուն ձեռքն առաւ վարչութեան ղեկը: Հազիւ անցել է մի տարի և երկու ամիս, երբ հայ ժողովրդի բոլոր խնդրութիւններն ու հանդէսները մթազնուեցին սրտի կաթուածից վախճանուած սիրեցեալ հովուապետի մահուան գուժով: Ս. յո, սրտի կաթուած: Մատթէոս Բ-ի կարող սիրտը շատ անգամ է հարուածուել, բայց ոչ նիւթական հարուածով, այլ բարոյական հարուածով. այսպէս եղաւ 1894 թուին և այնուհետև 1809 թուին: Հայ ժողովուրդը Նրան միշտ պաշտօնի է կոչում իւր կեանքի ամենածանր վայրկեաններին իմանալով նրա կամբի

ուժը և անընդհեղի երկաթեայ ընաւորութիւնը: Նորին Սրբութիւնը Կ. Պօլսոյ պատրիարք ընտրուեց 1894 թուին այն սարսափելի կոտորածից յետոյ, որին ենթարկուեց իւր հօտը, Սասունի կոտորածի ժամանակ, որ իւր հետ տարաւ 150,000 հայ կեանքեր . . . : Այստեղ Նորին Սրբութիւնը պէտք է լարէր իւր բոլոր ուժերը, որ շառ—քիչ բուժէր իւր ժողովրդի ցաւերը: Այնուհետև, ինչպէս յայտնի է, 12 տարի նա աքոսորի մէջ մնաց Երուսաղէմում, որովհետև Եւրոպայի առաջ իւր ժողովրդին պաշտպանում էր, գտնուելով Ն. քղիւլ—Համիդի բռնութեան տակ:

Երբ այս սարսափելի ռեժիմը վերջ աւաւ, Նորին Սրբութիւնը 1908 թուին վերադարձաւ Կ. Պօլիս, ուր նրան միաձայն ընտրեցին պատրիարք, բայց ծանր քարի պէս նստեց նրա որտին 1909 թուի Ադանայի նոր կոտորածը, որ 18,000 գոհեր տարաւ: 1808 թուին ամբողջ աշխարհի հայերի պատգամաւորները էջմիածնում ընտրեցին նրան պատրիարք—կաթուղիկոս ամենայն Հայոց, այն ժամանակ, երբ վանքում տիրում էր կատարեալ քայքայումն վանական կեանքի բոլոր ճիւղերում: Հոգևոր ձեմարանը առանց կառավարողի և առանց դասատուների, միջին և ստորին դպրոցները առանց ծրագրի և ուսուցիչների, վանքի դանձարկղը դատարկ, անշարժ կայքերը մնացել էին առանց կառավարողների ու հաշուետուութեան:

Այսպիսի քայքայուած կառավարութիւն ստանձնելով, Նորին Սրբութիւնը զանազան յանձնաժողովներ կազմեց կառավարելու դպրոցական և վանքի տնտեսական գործերը, հենց առաջին իսկ քայլերից հոգևորականութեան աւանդեց խաղաղութիւն և սէր, աշխատեց մինչև այդ պառակտուածներին հաշտեցնել և գործունէութեան կոչեց. իսկ ինքը ուսումնասիրում էր գործերն ու շաղթութեամբ և ղեկավարում: Վանական տնտեսութեան մէջ մտցրեց խիստ հաշուետուութիւն և հրատարակեց նրա հետևանքը, որ մինչև այդ գոյութիւն չունէր, և որը այնպիսի կարճ ժամանակում Նորին Սրբութեան նախորդներից ոչ մէկին չէր յաջողել կատարել . . . Այստեղ սկսեցին Նորին Սրբութեան գործունէութեան մասին ամենատեսակ հակաձառութիւններ և ըննադատութիւններ:

Գեւ այս աշնանը իւր Թիֆլիսում եղած ժամանակ, Նորին Սրբութիւնը հայ լաւագոյն ինտելլիգենցիային յայտնեց հետևեալը: «Իմ մասին շառ բան են գրում—և՛ լաւ և՛ վատ: Գրու վերայ դուք ամենեին ուշադրութիւն մի՛ դարձնէք: Ես աշխատում եմ, և հետևանքը կերեայ տպագայում »: Թէ՛ ին-

տելլիգենցիան և թէ՛ ժողովուրդը, որ ընտրել էր նրան, հաւատում էին թէ նրա այս խօսքերին և թէ դորժերին: Յայց աւանդ, չար ճակատագիրը, որ ծանրացած է հայ ժողովրդի վերայ, կորզեց նրա ազնիւ վաստակաւորին, տաղանդաւոր քարոզչին և անկողմնակալ կառավարչին և ձգեց նոր փորձութեան մէջ: Եթէ նորին Սրբութիւնը էջմիածնում սչինչ էլ չյաջողեց անել այդպիսի կարճ միջոցում, նրա 40 տարի կատարած բազմավագտակ և ծանր աշխատութեան համար Թուրքիայի հայերից միշտ էլ պէտք է երախտագիտութեամբ յիշուի Կ. Պօլսոյ «երկաթեայ» պատրիարք Մատթէոս Բ. Իզմիրլեանի ազնիւ պատկերը: Ամենայն Հայոց սիրեցեալ Հովուապետի աճիւնի առաջ գլուխ խոնարհելով, ցանկանում ենք, որ հայ ժողովուրդը էջմիածնի կաթուղիկոտական աթոռի համար թեկնածուի ապագայ ընտրութեան ժամանակ, միանար և կանգ առնէր այնպիսի անձնաւորութեան վերայ, որ կատարող լինէր հանդուցեալ Հովուապետի կտակը, որ է. «Աշխատենք զգուշութեամբ, սարսափելով վտանգաւոր և շմտածուած վարմունքից, պաշտպանենք մեր իրաւունքներն օրէնքի և օրինականութեան սահմաններում»:

Թիւրքիայի թերթերում հրատարակուած է անգլիական «Թայմզ» թերթի մի յօդուածը հանգուցեալ Իզմիրլեանի մահւան առթիւ, որ մի քանի կրճատումներով մէջ ենք բերում:

Թայմզ 13 դեկտեմբ.

— «Երբ, 1896-ի դէպ ի վերջը, հայկական կոտորածները տեղի ունեցան Փոքր Ասիոյ և Կ. Պօլսոյ մէջ, Մատթէոս Բ. իր կրօնակիցներուն պաշտպանութիւնն ստանձնեց, և Տէրութեանց ներկայացուցիչներուն դիմեց, համարձակ ամբաստանելով թուրք կառավարութեանը՝ ջարդերն ինք կազմակերպած ըլլալուն համար: Հետեւաբար, Ապրիլ-Համիտ զինք պաշտօնանկ ըրաւ պատրիարքութենէ, և Երուսաղէմ անտորեց, ուրիկ 12 տարի ետքը միայն դարձաւ, երբ 1908 Յլս. — ի յեղափոխութեամբ տասպալեցաւ Համիտեան ռէժիմը»:

Հակիրճ կենսագրականին Թայմզ կցած է հետեւեալ գնահատականը՝ հանգուցեալ կաթուղիկոտին վրայ:

«Մատթէոս Բ. յաջորդեց իբր կաթողիկոս հզօր անձնաւորութեան մը, որ գլխաւոր բաժինն ունեցած էր ազ-

գային մեծ զարթոնումի մը մէջ, որով Հայ ժողովուրդը միջին դարէն ելաւ եկաւ նոր ժամանակներու, և Հայ եկեղեցին ու ազգին զարգացման ընթացքին մէջ յուղուեցան այնպիսի խնդիրներ, որոնց լուծումը տակաւին ապագային կը վերաբերի: Լիմա չենք կրնար գիտնալ՝ թէ Մատթէոս Բ. ինչ բաժին պիտի ունենար այն խնդիրներուն կարգադրման մէջ՝ եթէ ապրէր: Համեմատաբար ծեր էր, երբ քահանայապետական աթոռն ամբարձաւ, իր կեանքին լաւագոյն մասն եղող 12 տարիներ աքսորի մէջ վատնելէ ետքը, իբր զոհն Համիտեան ուժիմի...

Իր օծումէն առաջ այցելած էր Բեդերսպուրկ, և Ձարը շատ բարեկամաբար ընդունելով զինք, կըսէր թէ նըպաստաւոր գաղափար մը ունեցած էր Հայոց նորընտիր Հայրապետին վրայ, թէև իր կեանքը Թիւրքիոյ մէջ անցուցած էր և հայերէն կխօսէր Թուրքիոյ ոճով, Մատթէոս Բ. ուսական հպատակ եղած էր, իր օծման առթիւ Ռուսիոյ քաղաքացիութեան իրաւունք ստացած ըլլալով:

Շէմքով ն. Սրբութիւնը բարձրահասակ, պատկառելի անձնաւորութիւն մ'էր, երկար սպիտակախառն մօրուքով: Մինչ Պօլիս էր, զինք երկաթէ Պատրիարք կանւանէին իր հաստատամտութեան համար, որով կամակատար պատրիարքներու շարքէ մը ետքը, ինք ծառայած էր Սուլթանին դէմ, և անոր խօսքը կատարել չէր յօժարած: Իր ձեւերը մի քիչ խիստ էին, գուցէ իր երկարամեայ տարագրման բերմունքով, բայց ինքն բարեսիրտ էր, եկեղեցական ծիսակատարութիւններէ դուրս, վանահայրէ մը աւելի փարթամ երևոյթ՝ չունէր: Կը կրէր ամեն վարդապետներու կամ միաբաններու սև վերարկուն, միակ որոշիչ նշանն ըլլալով հաղամանդակուռ փոքրիկ խաչ մը իր վեղարին վրայ: Բայց իր ազգակիցները շատկառանքով կը շրջապատէին զինք, վեհափառ անւանելով զինք, այսինքն՝ երբեմն Հայ թագաւորներուն յատկացած մակդիրը տալով իրեն:

Վեհափառ Հայրապետի թաղման ներկայացուցիչ էին կարգուած, Դերբէնտի ինտելիգենցիայի, Խարասուբազարի հայ հասարակութեան և Կ. Պօլսոյ Հայոց միացեալ ընկերութեան կողմից՝ Յովհաննէս Յովհաննիսեան.

Ազուլիսի կողմից՝ Աւետիս Արասխանեան.

Ինչպէս այս՝ թերևս և ուրիշ պատգամաւորութիւնները վրիպել են խմբագրութեանս հայեացքից, որի մասին ներումն ենք խնդրում:

Տանկաստանի հայոց դրութիւնը

Տարւոյս փետրուար 24 թուականաւ գրով մ'արդէն պարզած էի ազգային գործոց ընդհանուր վիճակը, և ի մասնաւորի Կիլիկիոյ ցաւալի ազէտին և պատրիարքի հրաժարման առթիւ Օսմ. կառավարութեան կողմէ տըրուած խոստումները, որոնց առջև համակերպելով Ազգային ժողովոյ որոշման՝ Նորին Սրբազնութիւն վերստանձնած է իւր պաշտօնը:

Չանք և կամք չպակսեցան պատրիարքարանի և ոչ ալ Ազգային Վարչութեան պատ. անդամոց, հետապնդելու համար այդ խոստմանց գործադրութիւնը, յուսալով միշտ թէ կարելի պիտի կրնար ըլլալ ըստ կարի, մեղմել դժբախտ արկածելոց վիճակը, և դարմանել մանաւանդ որբերու և այրիներու ամենատխուր կացութիւնը: Բայց ցաւ է յայտնել, որ կարելի չեղաւ այդ խոստմանց գոհացուցիչ գործադրութիւնը տեսնել վասնզի հայ անմեղ բանդարկեալներն անգամ հետզհետէ ազատ արձակելու համար կառավարութիւնը թուրք եղեռնագործներն ալ արձակեց գունդ գունդ, որով ընդհանուր ներումի մը գաղափարը, որ առաջին օրէն կը թխսուէր պետական շրջանակներու մէջ, իր յատուկ վախճանին հասաւ, փափաքուած կամ մտածուած եղանակներով:

Պատրիարքարանի քանի մը երկրորդական պահանջումներու կարգին՝ կառավարութիւնը մահլիւլէ զերծ կացուց արդարև սպանեալներու հողերը, բայց Ադանա ու